ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 24 » դեկտեմբերի 2025թ. Ն ՄՈ/1075-Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ «ԹԱԻՐՈՎԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲՆԱԿԱՆՈՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի 2025 թվականի դեկտեմբերի 22-ի N Ե/01/4088-25 գրությունը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Թաիրովի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հանրակրթական ծրագրերի բնականոն ուսուցման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

որոշում եմ՝

1. Մինչև Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Թաիրովի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության շենքի վերանորոգման շինարարական աշխատանքների ավարտը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Թաիրովի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության 1-12-րդ դասարանների աշակերտների հանրակրթական ծրագրերի բնականոն ուսուցման աշխատանքների կազմակերպումն իրականացնել «Մերձավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով ամրացված՝ Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան գյուղի Մասիսի փողոց 4 շենք հասցեում գտնվող դպրոցի շենքում՝ 2-րդ հերթով:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը, քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչությանը և ֆինանսական վարչությանը (վարչությունների պետեր՝ Ս. Բուդաղյան, Դ. Ավետիսյան և Ա. Հակոբյանը)՝ ապահովել սույն որոշման կատարումը:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը (պետ՝ Ս. Բուդաղյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել «Թաիրովի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մ. Բաղումյանին, վարչատնտեսական մասի համակարգող Հ. Պետրոսյանին, «Մերձավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Մկրտումյանին, վարչատնտեսական մասի համակարգող Ս. Հակոբյանին, «Թաիրովի միջնակարգ դպրոց» և «Մերձավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների հաշվապահներին (համաձայնությամբ):
4. «Թաիրովի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Հ. Պետրոսյանին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 21-ի N47-Ն հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված հավելվածի 21-րդ կետով սահմանված ուղևորափոխադրման ծառայության ձեռք բերումը՝ պայմանով, որ այդ ծառայությունից պետք է պարտադիր կարգով օգտվեն շահառուներ հանդիսացող «Թաիրովի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական աշխատողները և սովորողները:
5. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Արամ Գրիգորյանին:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ**